ԱՔՐԱՄ ԱՅԻԼԻՍԼԻԻ «ՔԱՐԵ ԵՐԱԶՆԵՐԻ» ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԵՆԹԱՏԵՔՍՏԸ*

Լուսինե Ղարախանյան

Բանալի բառեր՝ *քարե երազ, դրական հետերոստերեոտիպ, բացասական ավտոստերեոտիպ, հոգեբանական ենթատեքստ, հանդուրժողականություն, հումանիզմ, օրհոլի էֆեկտ:*

Երբ սոցիալական փոփոխությունն արագացնում կամ վերափոխում է հասարակության զարգացումը, անցյալը ներկայի համար պետք է դադարի օրինակ լինելուց, հատկապես եթե այն շարունակում է խանգարել նույն այդ հասարակության առաջընթացին [1, 6]: Մենք հակված չենք ընդհանուր գնահատականներ տալու հայ-ադրբեջանական հարաբերություններն արտացոլող առանձին դեպքերի ու իրադարձությունների, սակայն ադրբեջանցի գրող Աքրամ Այլիսլին, այս առումով, հանդես է գալիս բացառիկ նոր դիրքորոշումներով ու նոր մտահորիզոնում:

Աքրամ Այլիսլին, անշուշտ, նախորդների գործելակերպին վերադառնալու կոչ չի անում: Գրողն ապրում է, անձնային զարգացման ակմատիկ ֆազ, երբ մարդու անձնային ու հոգեբանական հասունությունը, նաև առանձին ընդունակությունները հասնում են իրենց զարգացման բարձրագույն աստիճանին:

Նախիջևանի Ինքնավար Հանրապետության Աշաղի Այիլիս, այսինքն՝ Ագուլիս գյուղում ծնված Աքրամ Այլիսլին մեր օրերում, իսկ ադրբեջանական հանրույթի պարագայում՝ բացառիկ համարձակ մտավորական է: Թերևս առաջին ադրբեջանցի թուրքը, ով խոսում է սումգայիթյան դեպքերի մասին և օգտագործում «հայերի կոտորած» արտահայտությունը: Եվ այս դեպքերը ու նաև ադրբեջանական իշխանությունների մշակած ռազմավարությունը ադրբեջանցի գրողի համար դառնում են անձնական տառապանք, և դա է արտահայտված «Քարե երազներ» գրքում: Գիրքը, ըստ էության, հենց այդ տառապանքից ազատվելու՝ գրողի փախուստն է: Այստեղ մենք առնչվում ենք գրողի անձնային ինքնամաքրման գործընթացին:

Վեպում բավականին շատ են դրական հետերոստերեոտիպերը: Ստերեոտիպերի մասին խոսելիս արժե անդրադառնալ Ուիլյամ Ջեյմսի կողմից առաջ քաշված սոցիալական «ես» հասկացությանը: Սոցիալական «ես»-ը, ըստ նրա, կազմված է մոդելներից, որոնք կազմում են շրջապատողների հետ մեր հարաբերությունների հիմքը [2, 318]: Ապաշխարանքի, ինքնամաքրման, խորը հումանիզմի՝ ներշնչանքի հասցնող ազդեցությամբ է Այլիսլին գրում և տենչում փոխել ինչ-որ բան, որ այնպես չէ: Նա խնամքով մեջբերում է Այիլիս (Ագուլիս) գյուղում նախկինում ապրած շատ ու շատ հայերի անուններ, անդրադառնում նրանց խաղաղ ու ստեղծագործ կենցաղի առանձին դրվագների: Վեպ-ռեքվիեմի բոլոր հայերն էլ ներկայացված են դրական կերպարներով: Դրական են նաև այն ադրբեջանցի թուրքերը, ովքեր առանցքային կերպարներ են և ներկայանում են որպես Բաքվի սերուցքային խավի ներկայացուցիչներ:

Վեպում արտացոլված են հայերին առնչվող բազմաթիվ դրական հետերոստերեոտիպեր և, ընդհակառակը՝ բացասական ավտոստերեոտիպեր, այսինքն՝ կայունացած բացասական դիրքորոշումներ սեփական էթնիկական հանրույթի նկատմամբ՝ «Ոչ թե հայերը, այլ մենք ենք վատը»: Դրական հետերոստերեոտիպերն արտահայտվում են բժիշկ Աբասալիի միջոցով. հայերն աշխատասեր են, կուլտուրական, ազնիվ: Բժիշկ Աբասալիի համար հայ կին Հայկանուշը կատարելատիպային կերպար է: Դրական կեր-

---

* Հոդվածն ընդունվել է 04.10.19:
Հոդվածը տպագրության է երաշխավորել ԱրՊՀ մանկավարժության և հոգեբանության ամբիոնը: 15.10.19:

պարներ են նաև Լուսիկը, Այինկան, Մինասը և ուրիշներ: Այստեղ մենք տեսնում ենք, որ էթնիկական կարծրատիպը ազդում է ինչպես էթնիկական համակրանքի /էթնոգոնիզմ/, այնպես էլ համակրանքի վրա:

Վեպի շատ ու շատ կերպարներ (ադրբեջանցիներ) բացասական մարմնավորումներ են: Շախդադժար Արմաղանովը, ով մեղադրվում է Գրետա Սարկիսովայի մահվան մեջ, ներկայացվում է որպես շուշեցի ջարդարար: Որպես բացասական կերպարներ են նաև Ադրբեջանի ազգային ճակատի անդամները՝ ի դեմս գլխավոր Բեյի: Բացասական էթնիկական ավտոկարծրատիպի մարմնավորում են նաև Հայաստանի փախստական ազերիները, ովքեր աչքի են ընկնում իրենց դաժանությամբ ու անմարդկային արարքներով: Հեղինակավոր բժիշկ Ֆարգանին, ով ևս դրական կերպարի մարմնավորում է, ուղղակի ապշած է ադրբեջանցիների՝ հայերի նկատմամբ ցուցաբերվող դաժանություններից: «Նա երբևէ չէր նկատել նման վերաբերմունք հայերի կողմից» [3]-, գրում է Այլիսլին: Գրողը ամբոխի անկարկումները (ադրբեջանցիների) համեմատում է որսի գնացած նախնադարյան մարդկանց գոռում-գոչյունների հետ: Այդկերպ նա նույնացնում է նաև սեփական էթնիկական հանույթը նախնադարյան համայնքի հետ, որը, ըստ էության, իր էթնոգենետիկ զարգացման վայրենության փուլում է:

Հեղինակն օգտագործում է նաև «հայկական կոտորած» բառերը: Ադիֆ Բեյը հրամայում է կոտորել հայերին: Նրանց մեջ էին Մինասը, Ալեքսանը: Այիլիսի բնակիչ Նուբարը բժշկին պատմում է թուրքերի գազանությունների մասին:

Այստեղ նշենք, որ անձի զարգացման ժամանակակից տեսությունների հիմնական ասպեկտ է դիտվում նրա կողմից միջավայրի կանոնների յուրացումը, այսպես կոչված «սոցիալական քերականության» ուսումնասիրումը և այն համարվում է անհատի հոգեֆիզիոլոգիական համակարգի այն դինամիկ կազմավորումը, որով դետերմինավորվում է նրա հարմարումը միջավայրին [4, 342]: Անձի վարքային կողմնորոշումները, անշուշտ, նրա ինքնագիտակցության կառույցի բաղադրամաս են, և կարծրատիպը որպես մարդկանց ու խմբերի մասին ընդհանրացված ու կայուն պատկերացումների համակարգ ևս անձի ինքնագիտակցության համակարգի աշխատանքի արդյունք է:

Հեղինակը նշում է նաև այդ մարդկանց բառաֆոնդում ավելացված և կարծրացած այնպիսի արտահայտություններ, ինչպիսիք են «Դու հայ ես», «Մահ քեզ» և այլն: Սրանք արդեն ապակառուցողական, ագրեսիայի դրսևորումներ են, որոնցում առկա է ապամարդկայնացման (դեհումանիզացիայի) տարրը: Այս առումով հեղինակը, իրոք, խորը տառապանք է ունենում և գրելու միջոցով արտահայտում է իր մեջ կուտակված ցավն ու բացասական ապրումները: Սա ինտելեկտուալիզացիայի պաշտպանական մեխանիզմն է, որն էլ հենց գալիս է փրկելու իրեն՝ գրողին:

Գրողը բացառիկ համարձակությամբ ընթերցողին համոզում է, որ Այիլիսիի եկեղեցու ավերակը ոչ թե Իստազն է, այլ Աստվածատունը: Հեղինակն օգտագործում է հենց այդ բառը և անդրադարձ կատարում նաև հայ եկեղեցու արդեն ավերակներին: Իսկ նրանցից որոշները, ըստ հեղինակի, ծառայում են որպես «Հայկական Մեքքա կամ Մեդինա»: Հեղինակը բարձրացնում է հուշարձանների նենգափոխման, այսինքն՝ էթնիկ վանդալիզմի խնդիրը և ընդգծում Այիլիսի հայերի էթնիկ ներկայության պատմությունը: Եվ այստեղ է, որ հուշարձանների ավերումը դառնում է զբաղեցրած տարածքի հետ ինքնության կապի լեգիտիմացում:

Հեղինակն ունի վառ արտահայտված հուզազգացմունքային և իմացական լարվածություն, ինչը փոխանցում է ընթերցողին իր կերտած գլխավոր կերպարի՝ Սադայ Սադօղլիի միջոցով: Սա բարձր արժեքներ կրող մարդ է, ով ունի վսեմ համոզմունքներ ու հետաքրքրություններ և յուրատեսակ մտածելակերպ, ինչի համար էլ հաճախ պատժի թիրախ է դառնում: Գրողի մեջ կուտակված տառապանքն արտահայտող գործողություն է դառնում անվանի դերասանի մահաբեր կատակը: Դա հենց նույն Աքրամ Այլիսլիի ազատ մտածելու և ազատ խոսելու ներքին բազային պահանջմունքն է, որն ար-

տացոլվում է մի շարք պատկերավոր արտահայտությունների միջոցով («Ազգի ոգին ամորձատել», «Կուսակցական տոմսը՝ ատրճանակ» և այլն):

Գրողը հոգեբանական խորաթափանցությամբ ընդգծում է արդար դատաստանի, խղճի խայթի և ապաշխարության հարցը, որն այլընտրանք չունի: Այիլիս գյուղի բոլոր հայերի տներում հոգիներ կան, որոնք տանջում են թուրք նորաբնակներին և պատժում նրանց տարբեր ձևերով: Եվ սպանված հայերի տան յուրաքանչյուր ադրբեջանցի վերաբնակիչ արդեն կրել է իր ծանր պատիժը, դրանք բոլորն էլ տարբեր են և մեկը մյուսից ծանր:

«Քարե երազներ» գրքում հայերի նկատմամբ կիրառված դաժան վերաբերմունքի բազմաթիվ տեսարաններ կան արտացոլված, որով, կարծում ենք, Այլիսլին բերում է իր՝ ազգային զարգացումների, ազգային ինքնագիտակցության սեփական մեկնաբանումները, որոնք ֆիքսված (հաստատապես արձանագրված) կամ ստատիկ չեն, այլ միշտ էլ վերակառուցվում են՝ ի պատասխան նոր պահանջների, հետաքրքրությունների և պատկերացումների, չնայած միշտ էլ գտնվում են որոշակի շրջանակների մեջ: Ի վերջո Այլիսլին «Քարե երազներ» վեպի միջոցով դնում է անցյալի դերի հարցը ներկայի ստեղծման մեջ:

«Քարե երազները» ենթադրում է հոգեփոխություն: Անհրաժեշտ ենք համարում նշել, որ որոշակի հոգեվերլուծական, մասնավորապես, կոնտենտ - վերլուծություն կատարելու արդյունքում պարզ է դառնում ազգային, մասնավորապես կրոնական ինքնությունից հեռանալու իրողությունը: Կրոնը էթնոպաշտպան գործառույթ է կատարում և անձի ինքնագիտակցության անբաժանելի բաղադրամասն է, եթե տվյալ մարդն ազգային արժեքների կրող է: Իսկ կրոնական զգացմունքների նվաստացումը, կամ սեփական էթնիկական հանրույթին բացասական վերագրումներ (ատրիբուցիա) կատարելը համատեղելի չէ իր մեջ բարձրագույն արժեքներ կրող մարդու համոզմունքներին: Սկզբունքայնորեն Այլիսլին կասկածի տակ է առնում ազգային ավանդույթ համարվող թլպատման երևույթը, ինչն ալլահի առաջ առաջնային պարտավորություն է դիտվում:

Այս համատեքստում հատկանշական է բժիշկ Ֆարիդ Ֆարզանիի խոսքը թլպատման տոնակատարություններից մեկի ժամանակ. «Մի՞թե,-ասում է,- ձեր մարգարեն Աստծուց խելոք է: Եթե մարդու մարմնում լիներ ինչ-որ ավելորդ բան, մի՞թե Աստված կույր էր, որ չտեսավ» և «Ո՞վ իրավունք տվեց ձեր մարգարեին ուղղել Աստծո սխալը» [5]: Այստեղ իսկապես առաջանում է երկարժեքության (ամբիվալենտության) զգացում: Թլպատման ավանդույթը, որքան էլ դա անընդունելի լինի այլ կրոնական համոզմունքներ ունեցողների համար և պարունակի արխայիկ տարրեր, ազգային ավանդույթ է, իսկ ազգային ավանդույթը ազգային մտածողության ու արժեքային համակարգի մաս է: Պետք է ասել, որ կասկածի տակ են առնվում գրողի կրոնական համոզմունքները, երբ նա վեպի գլխավոր հերոսի՝ տաղանդավոր դերասան Սադայ Սադօղլիին «ուղևորում է» էջմիածին՝ մեղքերը քավելու, քրիստոնեություն ընդունելու և անձամբ կաթողիկոսի օրհնությունը ստանալու համար: Հոգեբանորեն ճիշտ չէ նաև այն միտքը, որ ծագում է տաղանդավոր դերասանի հոգում. դառնալ վանական և աղոթել Աստծուն՝ մուսուլմանների՝ հայերի նկատմամբ կիրառված դաժանությունները ներելու համար: Այս միտքը Սադայի մտքում ծագում է սումգայիթյան մի գիշերվա դեպքերից հետո: Ուշագրավ է, որ հեղինակն ընդունում է սումգայիթյան դեպքերը և կատարում շեշտադրում՝ ապաշխարման մղելով իր ազգակիցներին: Այստեղ ևս առկա է կրոնական ինքնությունից հեռանալու միտումը: Հեղինակը, ըստ էության, երկրորդ անգամ մերժում է Ալլահին: Մինչդեռ մուսուլմանների գործած մեղքերի համար կարելի է հայցել նաև նույն Ալլահի թողությունը: Այս առումով վեպի առանձին հատվածներում ակնհայտ է դառնում նաև մուսուլմանական կրոնի անհանդուրժողականության իրողությունը: Մինչդեռ ազգային ինքնության քաղաքականության միավորներից է նաև կրոնը: Գլխավոր հերոսի՝ Սա-

դայի համար հայերը երկնային հրեշտակներ են, և նա իր անձից առավել է անհանգստանում Բաքվում բնակվող յուրաքանչյուր հայի համար:

Պետք է նկատել, որ սոցիալական և ազգային ինքնությունն անհատի սեփական ինքնագիտակցության այն կարևորագույն բաղադրիչն է, որը նրա համար արժեքային նշանակություն ունի: Չմոռանանք, որ Ադրբեջանի սոցիալական փոխազդեցության համակարգը թողում է իր ազդեցության կնիքը անհատների ինքնության ձևավորման վրա: Այսինքն՝ չպետք է խմբային ինքնությունից դուրս դիտարկել անհատի ինքնության հարցը: Այս համատեքստում ադրբեջանցի գրողի անհատական ինքնության հարցն ունի պարադոքսալ կամ կոնտրաստային երանգավորումներ: Կամ նրա՝ անհատի ինքնությունը գերազանցում է ազգային ինքնության տրամաբանությանը: Եվ այն աղմուկը, որ ստեղծվել է ադրբեջանցի հայտնի գրողի շուրջը, ըստ էության, ադրբեջանական հանրույթի ազգային ինքնավարության և ի դեմս Այլիսլիի, մարդու համընդհանուր իրավունքների իրարամերժության արդյունք է: Վեպի վերլուծությունից պարզ է դառնում Ադրբեջանի ազգային ինքնության մասնատված պատկերը, և այդ պատկերը ներկայացնում է նույն այդ երկրի հայտնի մտավորականը, որի հոգեկան աշխարհում պատերազմում են համամարդկային և ազգային արժեքները:

«Քարե երազներ» հակամարտող կողմերի՝ երկխոսության ծավալման յուրատեսակ նախապայման է ենթադրում, որը, թերևս, անհնար էր ԽՍՀՄ կազմալուծմանը հաջորդած առաջին տարիներին:

Այնուհանդերձ, «Քարե երազներ» գիրքը կարողացել է ապահովել, այսպես ասած, օրեոլի էֆեկտը /Halo Effect/ [6, 1], և ստեղծված տպավորությունը, իրոք, բացառիկ է այն առումով, որ առաջին անգամ ադրբեջանցի մտավորականը հանդես է գալիս հանդուրժողականության, հումանիզմի կոչով:

Պատմության ուսումնասիրումը վկայում է, որ միջէթնիկական բոլոր շփումները չէ, որ ձևավորում են դրական միջէթնիկական կարծրատիպեր: Վերջինիս ձևավորման համար անխուսափելի են հավասարության ու վստահության անպայման առկայությունը, ինչը չդրսևորվեց ոչ միայն Ղարաբաղի հայեր-ադրբեջանցիներ, այլև հայ-թուրքական դարավոր շփումներում: Դրական էթնիկական կարծրատիպերի ձևավորման համար անխուսափելի պայման է դիտվում միմյանց ավանդական նորմերի ու արժեքների նկատմամբ դրսևորվող փոխադարձ հարգանքը, որը կարող է դառնալ հակամարտության կարգավորման կամ կոնֆլիկտի տրանսֆորմացիայի նախադրյալ:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Մարության Հ. Տ., Հիշողության դերն ազգային ինքնության կառուցվածքում. տեսական հարցադրումներ. – Երևան, «Նորավանք», էջ 6:
2. Роберт Ф., Фейдимен Д., Личность, Теория, эксперименты, упражнения, Психологическая энциклопедия Санкт Петербург, "Праим-Еврознак" изд. Дом Нева, Москва, 2001, стр.138
3. http://www.irates.am/hy/1362386846
4. Келвин Холл, Гарднер Линдсей, Теория личности. Пер. с. Англ. И. Б. Гриншпун. – ЗАО Изд-во Эксмо-пресс, Москва, 1999, стр. 592
5. http://www.irates.am/hy/1362386846
6. http:www. pbi.ru/dic/ie/.

ԱՄՓՈՓԱԳԻՐ

Աքրամ Այիլիսլիի «Քարե երազների» հոգեբանական ենթատեքստը

Լուսինե Ղարախանյան

Գիտական հոգեբանական ուսումնասիրման ուշագրավ նյութ է պարունակում Աքրամ Այիլիսլիի «Քարե երազների» հոգեբանական ենթատեքստը: Բավականին շատ են վեպի դրական ավտոստերեոտիպերն ու բացասական հետերոստերեոտիպերը: Ադրբեջանի սոցիալական փոխազդեցության համակարգը թողում է իր ազդեցության կնիքը Ադրբեջանի առանձին անհատների ինքնության ձևավորման վրա: Վեպում խմբային ինքնությունից դուրս է դիտարկվուը անհատի ինքնության հարցը: Այս համատեքստում ադրբեջանցի գրողի անհատական ինքնության հարցն ունի պարադոքսալ կամ կոնտրաստային երանգավորումներ: Կամ նրա՝ անհատի ինքնությունը գերազանցում է ազգային ինքնության տրամաբանությանը: Հեղինակի դիրքորոշումներն ուշագրավ են կոնֆլիկտի տրանսֆորմացիայի դիտարկման կոնտեքստում:

РЕЗЮМЕ

Психологический контекст «каменных снов» Акрама Айлисли

Лусине Караханян

Ключевые слова: каменный сон, положительный гетеростереотип, отрицательный автостереотип, психологический контекст, толерантность, гуманизм, эффект ореола.

Данный материал для научного психологического исследования содержит психологический контекст “Каменных снов” Акрама Айилисли. В романе довольно много положительных автостереотипов и отрицательных гетеростереотипов. Система социального взаимодействия Азербайджана оставляет печать своего влияния на формирование личности отдельных лиц Азербайджана. В романе вопрос личности человека рассматривается вне групповой идентичности. В данном контексте вопрос индивидуальной идентичности азербайджанского писателя обладает парадоксальными или контрастными оттенками. Или его личностная идентичность превалирует над логикой национальной идентичности. Позиции автора примечательны в контексте наблюдения за трансформацией конфликта.

SUMMARY

The Psychological Context of Akram Aylisli's "Stone Dreams"

Lusine Karakhanyan

Keywords: stone sleep, positive heterostereotype, negative autostereotype, psychological context, tolerance, humanism, Oriol effect.

The psychological context of the Akram Aylisli's “Stone dreams” includes a remarkable material for scientific psychological research. There are quite a lot of positive autostereotypes and negative heterostereotypes in the novel. The Azerbaijan system of social interaction leaves the seal of its influence on the personality formation of individuals in Azerbaijan. In the novel, the question of a person's identity is considered outside of group identity. In this context, the question of the individual identity of the Azerbaijani writer has paradoxical or contrasting shades. His personal identity can prevail over the logic of national identity as well. The author's standpoints are remarkable in the context of observing.